ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԸ ՄՇԱԿԵԼ Է ՄԻ ՇԱՐՔ ՕՐԵՆՔՆԵՐՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐ

11.10.2019 10:00

ՀՀ փաստաբանների պալատի աշխատակազմը մշակել է մի շարք օրենքներում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին օրենքների նախագիծ, որը ներկայացվել է ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի քննարկմանը:

Ստորև ներկայացվում են այդ նախագծերը՝ լրացման և/կամ փոփոխության հակիրճ նկարագրությամբ.

- «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին և ՀՀ քաղաքացիական օրենսգրքում լրացումներ կատարելու մասին նախագիծ.

Նշված նախագծերով նախատեսվում է ներդնել ՀՀ փաստաբանների պալատի դեպոզիտի ինստիտուտը: Փաստաբանների պալատի դեպոզիտ հաշիվն իրենից ներկայացնում է փաստաբանների պալատի կողմից բացված բանկային հաշիվ, որտեղ մուտքագրվում են փաստաբանների պալատի անդամ փաստաբանների շահառուին՝ որպես պարտավորության կատարում, վճարման ենթակա գումարները:

Փաստաբանների պալատի դեպոզիտ հաշվի ինստիտուտը լայն տարածում ունի եվրոպական մի շարք փաստաբանական կառույցներում: Օրինակ, Ֆրանսիայում գործում է ԿԱՌՊԱ համակարգը, որի միջոցով պարտավորության կողմերի փաստաբանները գործարքի կատարման գումարը մյուս կողմին հանձնելու փոխարեն այն մուտք է անում պալատի դեպոզիտ հաշվին, որից հետո գործարքի մյուս կողմի պարտավորության կատարման (գույքի հանձնում, ծառայության մատուցում, աշխատանքի կատարում և այլ) դեպքում գումարի հասցեատերը ստանում է գումարը, հակառակ դեպքում գումարը վերադարձվում է վճարողին:

- «Սնանկության մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին նախագիծ.

Նախագծով առաջարկվում է «Սնանկության մասին» գործող օրենքում սնանկացման ոչ ենթակա ինստիտուտների շարքում ընդգրկել նաև Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատը: Նման մոտեցումը, մի կողմից, կբխի Պալատի սահմանադրական կարգավիճակից, քանի որ ՀՀ Սահմանադրությամբ նախատեսված ինստիտուտի գործունեության դադարեցումը՝ ներառյալ սնանկության վարույթի միջոցով և արդյունքում, չի կարող իրականացվել սովորական օրենքների միջոցով, իսկ, մյուս կողմից, օրենսդրական երաշխիքներ կստեղծվեն՝ երաշխավորելու Պալատի նշված կարգավիճակից բխող ֆինանսական անկախության և կայունության համապատասխան կառուցակարգեր, ինչը համահունչ կլինի պետության կողմից ստանձնված պոզիտիվ սահմանադրական պարտականությանն ապահովել անձի իրավաբանական օգնություն ստանալու հիմնարար իրավունքը և այդ իրավունքի իրացմանը միտված փաստաբանության անկախությունն ու ինքնակառավարումը:

- «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին նախագիծ.

Նախագծի ընդունումը պայմանավորված է փաստաբանության ինստիտուտի հատուկ իրավական կարգավիճակով, գործունեության հանրային -իրավապաշտպան բնույթով և առավել խոցելի կարգավիճակում գտնվող փաստաբանների իրավունքների պաշտպանությամբ և հնարավոր խախտումները բացառելու անհրաժեշտությամբ:

Նախագծով առաջարկվում է «Ձերբակալված և կալանավորված

անձանց պահելու մասին» գործող օրենքում ձերբակալված կամ կալանավորված փաստաբանին վերապահել իրեն տեսակցության եկած՝ փաստաբանների պալատի նախագահի հետ առանձին, անարգել տեսակցելու իրավունք՝ առանց տեսակցությունների թվի և տևողության սահմանափակման, անկախ աշխատանքային օրերից կամ ժամերից: Նման մոտեցումը, մի կողմից, կբխի փաստաբանների պալատի կարգավիճակից՝ որպես փաստաբանի իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը երաշխավորող մարմնի, իսկ, մյուս կողմից, օրենսդրական երաշխիքներ կստեղծվեն՝ ապահովելու փաստաբանի իրավունքների պաշտպանությունը և հնարավորինս բացառելու վերջինիս իրավունքների խախտումները:

- «Քաղաքացիական կացության ակտերի մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին, «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի հաշվառման մասին» ՀՀ օրենքում լրացում և փոփոխություն կատարելու մասին, «Ազգային անվտանգության մարմինների» մասին ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին, օրենքը, ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքում լրացում կատարելու մասին նախագծեր.

Նշված օրենքների նախագծերի փաթեթի ընդունումը պայմանավորված է դատահիրավական բարեփոխումների համատեքստում փաստաբանության՝ որպես արդարադատության իրականացմանը նպաստող ինստիտուտի դերակատարման բարձրացման հրամայականով և այդ առումով փաստաբանության սահմանադրական կարգավիճակից բխող համապատասխան միջոցառումների իրականացման անհրաժեշտությամբ և նպատակաուղղված է անձի իրավաբանական օգնություն ստանալու իրավունքի և այդ նպատակով գործող փաստաբանության ինստիտուտի պատշաճ գործառման օրենսդրական երաշիքների ստեղծմանը: Այդպիսով նաև հուսալի երաշխիքներ են ստեղծվում դատարանում զենքերի հավասարության սկզբունքի արդյունավետ իրականացման և, ըստ այդմ, գործի բազմակողմանի քննության ու պատճառաբանված դատական ակտի կայացման համար:

Պալատը կարևորում է փաստաբանական հարցման ինստիտուտի արդյունավետության բարձրացման օրենսդրական հիմքերի ձևավորումը: Փաստաբանական հարցումը, այն է՝ փաստաբանի կողմից իր վստահորդի գործով պետական, տեղական ինքնակառավարման մարմիններից և մասնավոր կազմակերպություններից տեղեկատվություն պահանջելու իրավունքը փաստաբանի սահմանադրական կարգավիճակի գործնական իրացման անօտարելի տարրերից է, առանց որի արդյունավետ գործառման՝ փաստաբանական գործունեության և, համապատասխանաբար, անձի իրավաբանական օգնություն ստանալու իրավունքի իրացման արդյունավետությունը նկատելիորեն ընկնում է:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ սույն նախագծով առաջարկվում է փաստաբանական հարցմանն ապօրինաբար չպատասխանելը սահմանել որպես որակյալ զանցակազմ՝ սահմանելով տուգանքի ավելի բարձր սահմանաչափ: Ակնկալվում է, որ առաջարկվող փոփոխությամբ կբարձրանա փաստաբանական հարցման ինստիտոիտի արդյունավետությունը՝ հարցման հասցեատերերի իրավական կարգապահության բարձրացման և իրավական պատասխանատվության կառուցակարգի հստակեցման միջոցով:

Նշված նախագծերը հաստատվել են փաստաբանների պալատի խորհրդի 08.10.2019թ. որոշմամբ և օրենքով սահմանված կարգով շրջանառության մեջ դնելու նպատակով 10.10.2019թ. ներկայացվել են ՀՀ արդարադատության նախարարությանը:

Բեռնել «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին և ՀՀ քաղաքացիական օրենսգրքում

լրացումներ կատարելու մասին նախագծերը.

Բեռնել «Սնանկության մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին նախագիծը.

Բեռնել «Ձերբակալված և կալանավորված անձանց պահելու մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին նախագիծը.

Բեռնել «Քաղաքացիական կացության ակտերի մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին, «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի հաշվառման մասին» ՀՀ օրենքում լրացում և փոփոխություն կատարելու մասին, «Ազգային անվտանգության մարմինների» մասին ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին, օրենքը, ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքում լրացում կատարելու մասին նախագծերը.

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })